



ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող «Ջրամատակարարման և Ջրահեռացման (ՋՋ) սեկտորի ծրագիր - լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիրը ներառում է 10 ենթածրագիր և ընդգրկում է Հայաստանի 10 մարզերի շուրջ 110 բնակավայրեր (18 բաղաձայններ և 92 գյուղեր):

Ծրագրի նպատակն է ընտրված համայնքներում բարելավել առկա ջրամատակարարման համակարգերը, ինչպես նաև ծառայությունների մակարդակը:

«Ջրամատակարարման և Ջրահեռացման (ՋՋ) սեկտորի ծրագիր - լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիրը բաղկացած է 2 բաղադրիչից. Ա բաղադրիչ - «Համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում», Բ բաղադրիչ - «Կառավարման բարելավում և կարողությունների զարգացում»:

Ա բաղադրիչն անդրադառնում է գոյություն ունեցող ջրամատակարարման ենթակառուցվածքների բարելավմանը, ինչը ներառում է մոտ 600.0կմ մայր ջրատարների և բաշխիչ ցանցերի վերականգնում, մոտ 110000 գոյություն ունեցող և նոր տնային տնտեսությունների ջրագծերի միացում ցանցին, 5 պոմպակայանների և 3 քլորակայանների, ջրի մաքրման մեկ կայանի, օրվա կարգավորման 15 ջրամբարների վերանորոգում, ինչպես նաև մոտ 20000 ջրաչափերի տեղադրում՝ հասարակական օբյեկտների և անհատ սպառողների համար:

Բ բաղադրիչն անդրադառնում է «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ գործառնական և կառավարման հետագա բարելավմանը, ինչպես նաև հանրության իրազեկման բարձրացմանը: Հանրային իրազեկման քարոզարշավ նախատեսվում է ծրագրում ընդգրկված բոլոր համայնքներում, որի ժամանակ շահագրգիռ բնակչությանը կտրամադրվի տեղեկատվություն ծրագրի իրականացման տարբեր ասպեկտների վերաբերյալ՝ ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության, սոցիալական, գենդերային և անվտանգության միջոցառումները:

Յուրաքանչյուր ենթածրագրի շրջանակներում խորհրդատվական կազմակերպությունն իրականացրել է նախագծային աշխատանքներ, որոնց մեջ բացի նախնական և աշխատանքային նախագծերի մշակումից, ԱԶԲ-ի պահանջով, ներառվել են նաև շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական, տարաբնակեցման և գենդերային հետազոտություններ, տարաբնակեցման, սոցիալական, գենդերային հարցեր և հանրային իրազեկման արշավ:

**Բնապահպանական հարցեր** - ծրագրի նախագծային փուլում իրականացվել է շրջակա միջավայրի ուսումնասիրություն և յուրաքանչյուր ենթածրագրի համար մշակվել է տեղանքին բնորոշ «Շրջակա միջավայրի կառավարման պլան»: ՇՄԿԴ-ի մեջ ներառվել են ազդեցությունը մեղմացնող միջոցառումներ, որոնց կատարումը շինարարական աշխատանքների ժամանակ պետք է պարտադիր վերահսկվի տեխնիկական վերահսկող թիմի և «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի համապատասխան մասնագետների կողմից:

**Սոցիոլոգիական հարցումներն** իրականացվում են 2 փուլով՝ նախագծման ընթացքում և շինարարական աշխատանքների ավարտից հետո: Հարցումներն անցկացվում են հատուկ մշակված հարցաշարի միջոցով: 1-ին փուլի հարցումների իրականացման ժամանակ բացահայտվել է համայնքներում առկա ջրամատակարարման վիճակն ու գոյություն ունեցող խնդիրները, ՋՋ համակարգերի

բարելավված ծառայությունների դիմաց վճարելու պատրաստակամությունը: 2-րդ փուլում հնարավոր կլինի բացահայտել նաև տվյալ ծրագրի իրականացման արդյունքները և բնակչության բավարարվածությունը ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներով:

**Չենդերային հարցեր** – ծրագրում հատուկ ուշադրություն է հատկացվում կանանց մասնակցության հարցերին: Կանանց մասնակցությունը խրախուսվում է ինչպես խորհրդատվական կազմակերպությունների թիմում աշխատելու, այնպես էլ ծրագրի արդյունքում նրանց առողջական և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման հարցերում: Հանրային իրազեկման քարոզարշավների ընթացքում հնարավորինս ներգրավվում են կանայք՝ որպես ծրագրի օգուտների վերաբերյալ հասարակական իրազեկության բարձրացման խթանողներ: Ծրագրով նախատեսվում է շահագրգիռ կանանց շրջանակներում բացահայտել հիմնական խնդիրները և հրատարակել տեղեկատվական պաստառներ՝ հանրային վայրերում տարածելու նպատակով:

**Տարաբնակեցման հարցեր** – ընդհանուր ենթածրագրի նախնական ուսումնասիրության ժամանակ բացահայտվել է, որ նախագծային և շինարարական փուլում չեն առաջանա որևէ խնդիրներ բնակչության ֆիզիկական տարաբնակեցման վերաբերյալ, ինչպես նաև չեն ծագի նույնիսկ ժամանակավոր տարաբնակեցման առնչվող հարցեր, որոնք կպահանջեն փոխհատուցում: Յուրաքանչյուր ենթածրագրի համար կկատարվի առանձին նախնական ուսումնասիրություն՝ հողի ձեռքբերման և տարաբնակեցման (ՀՁՏ) հարցերի շրջանակների որոշման և հստակեցման վերաբերյալ:

**Հանրային իրազեկման քարոզարշավներ** նախատեսվում է անցկացնել ենթածրագրի բոլոր համայնքների բնակիչների և այլ շահառու կողմերի մասնակցությամբ /տեղական ՀԿ-ներ, իրավաբանական անձ բաժանորդներ և այլն/: Հանրային իրազեկման ընթացքում նախատեսվում է հնարավորինս սերտ համագործակցություն տեղերում գործող բնապահպանական տեղեկատվական կենտրոնների /Օրհուսի կենտրոններ/ և այլ համայնքաին կազմակերպությունների հետ:

**II ենթածրագրով նախատեսվում է** բարելավել Վեդի, Արարատ քաղաքների և Արարատ, Այգեգարդ, Վերին Արտաշատ, Մրգանուշ, Շահունյան, Ագատավան, Բաղրամյան, Բյուրավան, Բուրաստան, Դալար, Դիմիտրով, Նշավան, Ոսկետափ, Հովտաշեն, Մրգավան, Մասիս, Բերքանուշ, Աբովյան, Մրգավետ գյուղերի ջրամատակարարման համակարգերը:

Բնակավայրերի ընտրությունը կատարվել է ըստ ԱԶԲ-ի կողմից ընդունված բնակավայրերի ընտրության չափանիշների՝

- ջրի մատչելիություն,
- ջրամատակարարման վիճակ (ջրամատակարարման գրաֆիկ, տևողություն, ջրի որակ, համակարգի տեխնիկական վիճակ),
- ջրահեռացման վիճակ,
- ցանցի տեխնիկական վիճակ,

- վարձավճարների ներկայիս հավաքագրման մակարդակ,
- բնակչության վճարունակություն և վճարման պատրաստակամություն,
- համայնքի ֆինանսական կայունություն:

Ենթաժրագրի համայնքներում խմելու ջրամատակարարումն իրականացվում է վթարային, ոչ բարվոք վիճակում գտնվող ներքին ցանցերի միջոցով: Զգալի չափերի են հասնում հոսակորուստները, լիարժեք չի կատարվում նաև համակարգում ջրի սպառման հաշվառումը:

Վերը նշված ենթաժրագրի համար մշակվել են նախնական և աշխատանքային նախագծերը, որոնք ներառում են փաստաթղթային ուսումնասիրություններ, բնակչության և ջրապահանջի կանխատեսումներ, առկա իրավիճակի գնահատում, առկա խնդիրների և թերությունների, մինչև 2040թ. ջրամատակարարման պահանջարկի վերլուծություն, շրջակա միջավայրի նախնական զննում և ՇՄԿՊ-ի մշակում, հանրային իրազեկում, սոցիալական, տարաբնակեցման և զենդերային ուսումնասիրություններ, որոնց հիման վրա մշակվել են ՋՋ համակարգերի բարելավման առաջարկներ: Առաջարկների ֆինանսական վերլուծության հիման վրա կատարվել են ներդրումային գնահատումներ:

***Վերին Արտաշատ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքներ***

**Արտաքին ջրատարի կառուցում**

- (110-200)մմ տրամագծերի 0.72կմ պոլիէթիլենե արտաքին ջրատարի վերակառուցում

**Ջրամատակարարման բաշխիչ ցանց**

- (63-160)մմ տրամագծերի 8.48կմ պոլիէթիլենե ջրագծերի կառուցում
- թվով 5 փականային հանգույցների կառուցում
- (50-100)մմ տրամագծերի թվով 4 թաղված տեղադրման փականային հանգույցների կառուցում
- 20մմ տրամագծի խողովակներով մուտքագծերի կառուցում անհատական տների համար` 150 ջրաչափական հորերի տեղադրմամբ:

**Ծրագրի կոնտակտներ`**

ՀԶԿ ՓԲԸ Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն, հեռ: 010 542877

Բաժանորդների սպասարկման կենտրոն – 1 71

Ջրաչափի ցուցմունքը կարճ հաղորդագրության տեսքով – 81 71